ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հունվարի 2022 թվականի №---Ա

քաղ. Երևան

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԿԱԶՄՈՂ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 2-ի №296Ա որոշումը, որով համաձայնություն է տրվել «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք բերելուց հետո «ԹԻՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ ԹԻՄ) կողմից «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության օգտին գրավադրելուն: Նշվածը հետագայում վարկային միջոցների հաշվին (այսուհետ՝ Վարկ) Ընկերության միակ բաժնետեր ԹԻՄ-ի կողմից ֆինանսավորում ստանալու ապահովման միջոց է հանդիսացել,

բ) Ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 2-ի և 3-ի համապատասխանաբար №1436/21-11, №1444/21-11 գրությունները, որոնց համաձայն՝ Ընկերությունը հայտնել է, որ Վարկի վերաֆինանսավորման և Ընկերության կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ԹԻՄ-ի հետ համատեղ նախաձեռնել են միջազգային ֆինանսական հաստատություններից՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայից (IFC), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից (EBRD) և «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությունից (այսուհետ՝ Գրավառու(ներ) վարկային միջոցների ներգրավման գործընթաց, ինչի կապակցությամբ Ընկերությունը խնդրել է համաձայնություն տալ Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100 տոկոս բաժնետոմսերը (ամբողջությամբ կամ մասամբ, որպես առաջնային կամ հաջորդող գրավ՝ ցանկացած համամասնություններով ու համադրություններով) Գրավառու(ներ)ի օգտին գրավադրելուն (այսուհետ՝ Գործարք),

գ) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2021 թվականի դեկտեմբերի 30-ի №01/11.1/8579-2021 գրությունը, որի համաձայն՝ վերջինս իր իրավասության շրջանակում չի առարկում Ընկերության կանոնադրական կապիտալը կազմող 100 տոկոս բաժնետոմսերը Գրավառու(ներ)ի օգտին գրավադրելուն, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Գործարքին:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով տրված համաձայնությունը Գործարքի կնքման համար վավեր է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամսվա ընթացքում:
3. Ընկերությանը՝ Գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել դրան առնչվող փաստաթղթերը:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- հունվարի 2022թ.